ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ վարչապետի 01.06.2019թ. թիվ 666-Լ որոշմամբ հաստատված ԵՄ և ատոմային էներգետիկայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կիրարկման ճանապարհային քարտեզի «Տրանսպորտ» բաժնի 31-րդ և 3-րդ կետերի կատարման ապահովմամբ, ինչպես նաև «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում իրավական ակտեր ընդունելու լիազորող նորմերի սահմանման անհրաժեշտությամբ (ՀՀ վարչապետի 02.11.2021թ. թիվ 02/10.3/37766-2021 հանձնարարականի 3-րդ կետ):

Մասնավորապես, Համաձայնագրի Հավելված I-ի «Համագործակցության վերաբերյալ այլ քաղաքականություններ» V մասի 1-ին «Տրանսպորտ» գլխի «Ֆիսկալ պայմաններ» բաժնով նախատեսված է Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի 2004/54/ԵՀ «Անդրեվրոպական ճանապարհային ցանցի թունելներին ներկայացվող նվազագույն անվտանգության պահանջների մասին» և 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/96/ԵՀ «Ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման մասին» հրահանգների ՀՀ-ում կիրարկման պահանջը, որը հնարավոր է ապահովել «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում վերոհիշյալ հրահանգներից բխող փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պայմանագրերով և կոնվենցիաներով ստանձնած ի թիվս այլ պարտականությունների՝ ՀՀ-ն ստանձնել է նաև կիրառման մեջ դնել ճանապարհային անվտանգության հետ առնչվող հետևյալ երկու ԵՄ հրահանգները.

1) 2004 թվականի ապրիլի 29-ի 2004/54/ԵՀ «Անդրեվրոպական ճանապարհային ցանցի թունելներին ներկայացվող նվազագույն անվտանգության պահանջների մասին».

2) 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/96/ ԵՀ «Ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման մասին»:

Մասնավորապես, Հրահանգների շրջանակներում անհրաժեշտ է ապահովել՝

1) միջազգային չափանիշներին համապատասխան ճանապարհային անվտանգության աուդիտի ինստիտուտի ներդրման գործընթացը, որը ենթադրում է ճանապարհային ծրագրերի իրականացման բոլոր փուլերում ճանապարհի անվտանգության մանրամասն, համակարգված և տեխնիկական անվտանգության ստուգման անկախ գործընթացի իրականացումը (2008/96/ ԵՀ հրահանգի 4-րդ և 6-րդ հոդվածներ, և Հավելված 2 և 2ա).

2) նոր կառուցվող, վերակառուցվող, հիմնանորոգվող և նորոգվող ավտոմոբիլային ճանապարհների մասով ճանապարհային անվտանգության կառավարումը՝ ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման, ճանապարհային անվտանգության աուդիտի անցկացման և անվտանգության մասով հսկողական միջոցառումներ իրականացնելու միջոցով (2008/96/ ԵՀ հրահանգի 4-րդ և 6-րդ հոդվածներ, և Հավելված 1, 3).

3) ճանապարհների անվտանգության տվյալների կառավարում (2008/96/ ԵՀ հրահանգի Հոդված 7 և Հավելավծ 4).

4) ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) հետևանքով մահվան և լուրջ վնասվածք ստացած անձնաց միջին հանրային ծախսերի հաշվարկի կատարումը (2008/96/ ԵՀ հրահանգի Հոդված 6c)՝ ՃՏՊ հետևանքով տնտեսությանը հասցված վնասների և ծախսերի հաշվարկի իրականացման նպատակով, որը ***հնարավորություն է տալիս հաշվարկել և համադրել ճանապարհային անվտանգության բարելավման նպատակով կատարվող ներդրումների, ՃՏՊ-ների հետևանքով ՀՀ պետական բյուջեից կատարվող ծախսերի (շտապօգնության, առողջության վերականգման, փրկարար ծառայությունների ծախսեր, ոստիկանության (պարեկային ծառայության ծախսեր), ջարդված մեքենաների քարշակի և տեղափոխման ծախսեր, վթարի վայրի մաքրման ծախսեր և այլն) հետ, ինչպես նաև հաշվարկել տեղի ունեցած ՃՏՊ-ների ազդեցությունը ՀՆԱ-ի ցուցանիշների վրա***: Միջազգային փորձի հիման վրա ընդունած վիճակագրության համաձայն, ՃՏՊ հետևանքով վթարների ընդհանուր արժեքը համարժեք է ՀՆԱ-ի շուրջ 5%-ին: Ճանապարհների գնահատման միջազգային ծրագիրը (International Road Assessment

Programme (iRAP)) կիրառում է ՃՏՊ-ների հետևանքով մահվան և լուրջ վնասվածք ստացած անձնաց միջին հանրային ծախսերի հաշվարկման հետևյալ բանաձևը՝ մահ = ՀՆԱ/մարդ×70, լուրջ վնասվածք = ՀՆԱ/մարդ×17.5[1]: Նշված հաշվարկի իրականացման արդյունքում կորոշվի ՃՏՊ-ների երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցությունները տնտեսության վրա, վեր կհանվեն ՃՏՊ-ների սոցիալական և տնտեսական ազդեցությունները և ռիսկերը, ինչպես նաև այն միջ ինչպես նաև այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել քաղաքականություն իրականացնողներին ՃՏՊ-ների թվի նվազեցման համար:

5) թունելներին ներկայացվող նվազագույն անվտանգության պահանջների սահմանումը և ՀՀ-ում գործող և նոր կառուցվող թունելների նախագծման, կառուցման և պահպանման գործընթացում ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման պահանջներին դրանց համապատասխանեցումը (2004/54/ԵՀ հրահանգի 3-13 հոդվածներ):

Վերջին տարիներին ճանապարհային ենթակառուցվածքի վերականգնման և անվտանգության բարելավման ուղղությամբ ձեռնարկվել են բազմաթիվ միջոցառումներ, այդ թվում համալրվել և բարելավվել է ճանապարհային կահավորանքը, իրականացվել են վթարավտանգ հատվածների վերացմանն ուղղված ծրագրեր, այդուհանդերձ ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության բարելավման ուղղությամբ ավելի համակարգված, շարունակական և պարտադիր բնույթ կրող միջոցառումներ իրականացնելու, ինչպես նաև ինստիտուցիոնալ կարգավորումներ տալու անհրաժեշտություն է առաջացել, որը բխում է միջազգային փորձից, ՄԱԿ–ի կոնվենցիաներից, Առողջապահության Համաշխարհային կազմակերպության կողմից 2021-2030թթ. համար սահմանված Ճանապարհային անվտանգության գլոբալ պլանից: Որպես թիրախ է սահմանվել ճանապարհատրանսպորտային պատահարները մինչև 2030թ-ը 50 տոկոսով կրճատումը:

Նախագծի կիրարկումն ապահովող միջոցառումների արդյունքում կբարձրանա ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության մակարդակը, որոնք կնպաստեն ՃՏՊ-ների կանխարգելմանն ու դրական ազդեցություն կունենան պատահարների կրճատման վրա:

---

[1] iRAP-ի բանաձևը կիրառվում է միջին և ցածր եկամուտ ունեցող երկրերում տեղի ունեցած ՃՏՊ-ների հետևանքով մահվան և լուրջ վնասվածք ստացած անձնաց միջին հանրային ծախսերի հաշվարկման

Միաժամանակ Նախագծով առաջարկվում է սահմանել նոր հասկացություններ, որոնց բացակայությունը նախկինում հաճախ տարամեկնաբանությունների տեղիք է տվել:

Բացի այդ Օրենքում բացակայում են կառավարությանն ու պետական լիազոր մարմնին իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում որոշակի իրավական ակտեր ընդունելու համապատասխան լիազոր նորմերն, ինչը խոչընդոտում է դրանց լիարժեք իրականացմանը:

Միջազգային և տարածաշրջանային առևտրի խթանման, միջազգային տարանցի բեռնափոխադրումների ծավալների ավելացման, և ճանապարհային ցանցը դրան համահունչ զարգացնելու նպատակով՝ կկանոնակարգվեն ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատումները՝ դրանց ֆունկցիոնալ նշանակությունը համապատասխանացնելով ճանապարհային երթևեկության և անվտանգության պահանջներին:

3. Կարգավորման նպատակը և բնույթը.

Օրենքի նախագծով կարգավորվում են ԵՄ ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգությանն առնչվող հիշյալ հրահանգների պահանջներով սահմանված դրույթները, ինչպես նաև վարչապետի 02.11.2021թ. թիվ 02/10.3/37766-2021 հանձնարարականով նախատեսված օրենքով լիազորող նորմերի սահմանման գործընթացները:

Մասնավորապես, «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում՝

1) 2-րդ հոդվածում հստակեցվել և խմբագրվել են «օտարման շերտ», «հողային պաստառ», «արհեստական կառույցներ» և «ճանապարհային ծառայություն» հասկացությունները, ինչպես նաև լրացվել են նոր հասկացություններ, որոնք կարգավորում են ԵԽ հրահանգներով նախատեսված ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգության կառավարման և ազդեցության գնահատման, ճանապարհային անվտանգության աուդիտի, ճանապարհային ենթակառուցվածքների ծրագրի հետ կապված հարաբերություններ և այլն: Միաժամանակ Նախագծով ավելացվել են նաև մի շարրք նոր

հասկացություններ կապված ճանապարհների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման և միջին նորոգման և այլնի հետ, որոնք գործող օրենքում բացակայում են.

2) վերանայվել են «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքի 4-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված դրույթները՝ կապված պետական ճանապարհային մարմնի, ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում, բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում և պաշտպանական գոտիներում հաղորդակցուղիների տեղադրման (վերատեղադրման) և շենք-շինությունների կառուցապատման գործընթացի հետ կապված, ինչպես նաև սահմանվել են լիազորող նորմեր: Օրենքի ընդունման արդյունքում փոփոխություններ կիրականացվեն ՀՀ կառավարության մի շարք որոշումներում, կընդունվեն նոր որոշումներ.

3) Սահմանվել է նաև, որ ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, վերակառուցման ծրագրերը միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորման դեպքում՝ ծրագրերի մշակման և նախապատրաստական փուլերում, Կառավարությունն իրավասու է հաստատել հանրության գերակա շահ ճանաչված հողերի օտարման և տարաբնակեցման սկզբունքները և շրջանակը, ինչպես նաև հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիրը.

4) Սահմանվել են միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում օրենսդրությամբ սահմանված կարգով և գործող քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան կառուցապատման սահմանափակումները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունները.

5) Օրենքում ավելացվել է դրույթ, համաձայն որի՝ ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում և (կամ) պաշտպանական գոտիներում կառուցապատման արդյունքում անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի տեղադրումը իրականացվում է կառուցապատողի միջոցների հաշվին, իսկ կահավորանքի նախագծերը պետք է նախապես համաձայնեցվեն պետական ճանապարհային մարմնի՝ ՏԿԵՆ-ի և երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի՝ ՀՀ ներքին գործերի նախարարության հետ հետ:

6) ՀՀ վարչապետի 2023 թվականի փետրվարի 7-ի թիվ 02/16.11/4247-2023 հանձնարարականի համաձայն, ինչպես նաև նոր կառուցվող և վերակառուցվող ավտոմոբիլային ճանապարհներին հեռահաղորդակցության ենթակառուցվածքների տեղադրման հարցը կանոնակարգելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Նախագծով

սահմանվել է նաև, որ նոր կառուցվող և վերակառուցվող ավտոմոբիլային ճանապարհների նախագծանախահաշվային փաստաթղթերում կարող են նախատեսվել հեռահաղորդակցության ենթակառուցվածքների՝ դիտահորերի, խրամուղիների, հենասյուների կառուցումը Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան սահմանված կարգին համապատասխան՝ օպերատորի (սեփականատիրոջ) հետ կնքելով վարձակալության պայմանագիր: Նշվածը պայմանավորված է նրանով, որ ճանապարհների կառուցման կամ վերակառուցման ժամանակ չեն նախատեսվում հեռահաղորդակցության ենթակառուցվածքների կառուցումը, որը օպերատորների մոտ առաջանում են դժգոհություններ: Վերոհիշյալ գործընթացի իրականացման, վարձավճարի սահմանման կարգը և վարձակալության պայմանագրի ձևը կսահմանի ՀՀ կառավարությունը՝ հաշվի առնելով դրանց կառուցման համար անհրաժեշտ ծախսերը:

7) Նախագծով կարգավորվել են հիշյալ հրահանգներով պահանջվող ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման, ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման, ճանապարհային անվտանգության աուդիտի և ճանապարհային թունելների անվտանգության նվազագույն պահանջներով նախատեսված հարաբերությունների հետ կապված դրույթներ:

Սահմանվել է ճանապարհային անվտանգության աուդիտորներ դառնալու պայմանները, ինչպես նաև որակավորման և վերապատրաստման կարգերը կառավարության կողմից սահմանվելու պահանջը: Միաժամանակ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման արդյունքում Ճանապարհային անվտանգության աուդիտորի և թունելի անվտանգության գծով պատասխանատուի որակավորման քննություն ընդունելու և որակավորման վկայական տալու համար մասնակիցներից կգանձվի օրենքով սահմանված բազային տուրքի համապատասխանաբար 20-ապատիկի և 10-ապատիկի չափով գումար:

9) Սահմանվել է, որ պետական ճանապարհային մարմինը պետք է իրականացնի ***ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով կրած վնասի միջին հանրային ծախսերի հաշվարկ և վերլուծություն, որն անհրաժեշտ է շահագրգիռ մարմիններին հասցեական քաղաքականություն և անվտանգության բարելավման միջոցառումները ֆինանսավորելու համար: Գոյություն ունեն այդ ծախսերի հաշվարկման տարբեր մեթոդներ:*** Որպես կանոն այդ տվյալները պետք է արլացոլվեն նաև ԱՀԿ, ՄԱԿ-ի և Ճանապարհային անվտանգության տարածաշրջանային և ազգային դիտակետերի հաշվետվություններում (զեկույցներում):

10) օրենքի անցումային դրույթներում նախատեսվել է փոփոխությունների արդյունքում անհրաժեշտ ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման և ճանապարհային անվտանգության համակարգի ներդրմանն առնչվող անցումային դրույթներ:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրաված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից:

5. Ակնկալվող արդյունքները.

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ.

1) Կհստակեցվեն օրենքում իրավական ակտեր ընդունելու լիազորող նորմերը.

2) Կսահմանվեն ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգության կառավարման, ազդեցության գնահատման, ճանապարհային անվտանգության աուդիտի և ճանապարհային թունելների անվտանգության նվազագույն պահանջներով նախատեսված հարաբերությունների հետ կապված դրույթները.

3) Կհստակեցվեն ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում, բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում և պաշտպանական գոտիներում կառուցապատման պահանջները.

4) Պետական ճանապարհային մարմինը կիրականացնի նաև ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգության կառավարման, ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման, ճանապարհային անվտանգության աուդիտորների որակաորման գործառույթներ.

5) Ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգության կառավարման արդյունքում ճանապարհաշինարարական ծրագրերի իրականացման բոլոր փուլերում՝ ճանապարհի շինարարության պլանավորումից մինչև ճանապարհը շահագործման հանձնելուց հետո մեկ տարվա ընթացքում կիրականացվեն ճանապարհային անվտանգության աուդիտներ, որը կհանգեցնի ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության բարելավմանը.

6) Թունելների անվտանգության ապահովման մասով կսահմանվեն նվազագույն տեխնիկական պահանջներ (օդափոխության համակարգերի, տարհանման,

լուսավորության, հակահրդեհային համակարգերի և այլն), ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգության կառավարման մարմնի կողմից կիրականացվեն թունելների անվտանգության նկատմամբ հսկողության, գնահատման և փորձարկման գործընթացներ, կուժեղացվի թունելների անվտանգությանն ուղղված միջոցառումները:

Միաժամանակ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման արդյունքում Ճանապարհային անվտանգության աուդիտորի և թունելի անվտանգության գծով պատասխանատուի որակավորման քննություն ընդունելու և որակավորման վկայական տալու համար մասնակիցներից կգանձվի օրենքով սահմանված բազային տուրքի համապատասխանաբար 20-ապատիկի և 10-ապատիկի չափով գումար:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Օրենքների նախագծերը բխում են ՀՀ կառավարության Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 փաստաթղթի «2.4 Բնածին, տեխնածին և մարդածին աղետներին դիմակայելու բարձր պատրաստվածություն» թիրախային արդյունքների, «2.4.3 Համայնքների, ենթակառուցվածքների և շենք-շինությունների անվտանգության և բնակչության դիմակայունության մակարդակ (ըստ մասնագիտական գնահատականի)» ցուցանիշներից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «3.2 Ճանապարհաշինություն» վերնագրի 3-րդ պարբերության և ՀՀ կառավարության 18.11.2021 թիվ 1902-Լ որոշման 1-ին հավելվածի ՏԿԵՆ 48.1-րդ կետով նախատեսված միջոցառման կատարման պայմաններից: